

ՄԱՅՐԵՐՈՒԽՆ ԲԱԺԻՆԸ

ԿԱՐԵԼԻ Է ԽՆԿԱՆՆ ՄԵՇՑՆԵԼ ԾԹԱՆՑ ԿԱԹ-Ի

«»

Խառն կաթնտուռթիւնը — մօր և կովու կաթով — մայրական դիեցումէն տասն անգամ աւելի զոհ կը պատճառէ, իսկ արուեստական ծծակով կաթնտուռթիւնը՝ 25 անգամ աւելի:

Ծծմօր կաթը ոչ միայն իր զաւկին իրաւունքը, այլ՝ անոր տաջնակարգ մնունդն է: Այս մասին ո'չ մէկ կասկած, ո'չ մէկ տարակարծութիւն:

Մայրերու 100ին 3 — 4ը միայն, պարագ ծիծերով, իր զաւակը չի կրնար գոհացնել ու դիեցնել սկիզբէն, իսկ 100ին 96 — 97ին ծիծերը մանկան կը հայթայթեն ապրելու և անելու անհրաժեշտ բուրու կենսատարբերը: Աակայն երբեմն — բարեբախտարար հազուադէպ — երախան իր մօր կաթին հանգէպ մասնաւոր, անհատական անմարսողութիւն մը ցոյց կուտայ: Ան իր մօր կաթը ծծելէ ետք՝ կը փսխէ, խթեր կ'ունենայ, փորհարութեան կ'ենթարկուի, անհանգիստ է, կը ճշայ անգադար, չի քնանար: Ամէն ծիծտուքէ վերջ, կարծես երախան թունաւորուած է: Օրէ օր կը գեղնի, կը նիհարնայ, մորթային բորբոքումներ կը ցցուին գէմքին ու մարմինին զանազան մասերուն վրայ:

Երբեմն ալ, ձննդեան թուականէն հաշուելով, մէկ քանի ամիսներ, իր մօր կաթը կուշտուկուռ խմելէ, զայն կանոնաւոր կերպով մարսելէ ու ամելէ ետք, ոնեւէ անհանգստութեան հետեւանքով, մինչ այդ կազդուրիչ և կենսատու մնունդը, կաթնազրիւրը յանկարծչարափոխուած մահաբոյր բաժակի, կը թունաւորէ իր պատկանեալ մասնկիցը Եւ երբեմն ոչ միայն մօրը կաթը, այլ բոլոր ստնտուներու և չորքոտանի գասակարգին պատկանող ընտանի ստնաւորներու հայթայթած, բոլորիս ծանօթ և մատչելի, բնական կամ բարեփոխեալ կաթերը գէպի դուրս կը մերժուին երախային ստամոքսէն: Երախան կը փսխէ, օրէ օր կը նիհարնայ, և աստիճանարար կը գիմէ գէպի մահ: Եռացած և հանքային ջուր, բուսաջուրեր ոնեւէ գարման չեն բերեր կացութեան:

Դիտութեան ու մանկատածութեան պահանջներու համաձայն՝ կաթնտուռթիւնը կը շարունակենք, բայց երախային վիճակը օր ըստ օրէ կը վատթարանայ: Շաբթէ շաբաթ կլուը կը պակսի, հիւանդէ, գունաթափ ու սակաւարիւն: Ոսկրաթեքութեան ախտանիւնը կ'երեւին, մարմնոյն վրայ վէրքեր կը բացուին, թարախոտ և

